

**Սրբեր, հավատացյալներ և քրիստոսով եղբայրներ**  
**Կողոսացիներ, Գլուխ 1, #2**

**ԲԱՏՈԼՄ**

Ինչպե՞ս կարող են կաթոլիկներն ու բողոքականները այսքան տարակարծիք լինել սրբերի հարցում: Եվ ի՞նչն է պատճառը: Ես կարդացել եմ այս գիրքը: Ահա այն, սա Աստվածաշունչն է: Եվ ինձ համար միևնույն է, թե նրա որ թարգմանությունն էք դուք կարդում, որպեսզի լսեք իմ մեկնաբանությունը: Այս գրքի պարունակությունից, նրա բովանդակությունից պետք է բխեն ձեր մտքերը, ձեր գաղափարները, երբ դուք պատրաստվում եք ձեզ քրիստոնյա կոչել կամ նույնիսկ եթե հրեա: Այս գրքի առաջին կեսը՝ Յիսուս Կտակարանը, որը նրանք կարդում են, պիտի դառնա ձեր կատալիզատորը, ձեր GPS-ը, ձեր ամբողջական ուղեցույցը ձեր հավատքում կողմնորոշվելու համար:

**ՈՒՂԵՐՁ**

Ինչպես գիտեք, անցյալ շաբաթ մենք սկսել ենք Կողոսացիների գրքից: Ես համառոտ ներկայացրել եմ այն, անդրադարձել եմ կարևոր ու գլխավոր տեղեկություններին: Այսօր էլ կշարունակեմ խոսել այդ գրքի մասին և կփորձեմ շոշափել պատմության որոշ այլ դրվագներ, որոնք առաջին հայացքից գուցե այդքան էլ տեղին չեն, բայց դառնում են շատ կարևոր, երբ փորձում ենք պարզել ու հասկանալ, թե ինչ է իրականում տեղի ունեցել այն եկեղեցիների հետ, հատկապես Փոքր Ասիայի եկեղեցիների, որոնց մասին գրել է Պողոսը: Այժմ մենք պատմական լավ ժամանակագրություն ունենք: Այդ տարածքը, ես նկատի ունեմ Փոքր Ասիան, մ.թ.ա. 25-ից մինչև մ.թ. 235 թվականները եղել է հռոմեական տիրապետության տակ: Այդ ժամանակներում այն կոչվում էր Անատոլիա: Այլ լեզուներից փոխառված անվանումներ նույնպես կան: Օրինակ՝ «Փոքր Ասիա»-ն ծագել է հունական mikra Asia-ից: Եվ մենք իսկապես կարող ենք գտնել այդ եզրույթի ծագումնաբանությունը. 300-ականների կեսերին այդ ձևակերպումը տվել է քրիստոնյա մի գիտնական: Բայց ինչն էր կարևոր: Ես կարող էի ձեզ հետ այլ բաների մասին խոսել, բայց այստեղ ինձ գրավել է այն, թե ինչպես են հրեաները հայտնվել Փոքր Ասիայում: Իմ հետաքրքրությունը շարժել է նաև աստվածաշնչյան մի ընդհանուր տերմին, որն օգտագործվում էր հավատացյալների և ոչ հավատացյալների մասին խոսելիս. այդ տերմինն է «հեթանոսներ»: Բայց պատմության նկատմամբ դա արդարացի չէ: Պատմության և այն ժողովրդի, որն առավել հայտնի է որպես կելտեր կամ կելտոյներ: Այդ ժողովրդի անհավանական պատմությունը ես սկսել եմ ուսումնասիրել 4 կամ 5 տարի առաջ, որոշ ժամանակ անց նորից անդրադարձել եմ դրան: Յետո որոշել եմ, որ պետք է մի կողմ դնեմ այդ ամենը, որովհետև դա հեշտ չէ և գնալով ավելի

բարդ է դառնում, քանի որ սերտորեն կապված է մի քանի այլ թեմաների հետ: Բայց ես ուզում եմ, որ դուք մտածեք այդ մարդկանց մասին, որոնց իրական բնութագիրը ոչ ոք այդպես էլ չի կարողացել տալ: Որոշ պատմիչներ փորձել են դա անել, բայց պատկերացրեք աշխարհը նախքան որևէ եկեղեցու ստեղծումը. իսկ եկեղեցու պատմությունը սկսվում է Քրիստոսից հետո:

Պատկերացրեք այն աշխարհը, որում անթիվ-անհամար նորաբնակներ մշտապես գալիս և գնում էին ու պատերազմում էին տարածքների համար: Եվ խոսքը միայն կելտերի կամ կելտոյների մասին չէ, այլ նաև խեթերի և նմանատիպ այլ ժողովուրդների: Շատ ազգեր են աշխարհ եկել, բնակեցրել այն, հետո սկսել են պատերազմել, ինչի հետևանքով նրանցից ոմանք տեղահանվել են, ոմանք՝ գաղթել, ոմանք էլ իսպառ բնաջնջվել են: Եվ այդ ամենն այստեղ է՝ իմ գլխում, և դա շատ հարցեր է առաջացնում: Օրինակ՝ այն ժամանակներում, երբ Հիսուս Քրիստոսի մահից և հարությունից հետո Պողոս առաքյալը Փոքր Ասիայում եկեղեցիներ էր հիմնում, աշխարհում կային ամենատարբեր ժողովուրդների ժառանգներ: Մենք չենք կարող բավարարվել միայն «հեթանոս» բառով: Դա ճիշտ չէ, բայց դա օգնում է մեզ մի ուրիշ բան էլ հասկանալ: Այդ տարածաշրջանի շատ հավատալիքներ, որոնք էլ երբեք չեն լինի, չի կարելի պարզապես հեթանոսական անվանել, օգտագործել մեկ բառ ամեն ինչի համար: Այսօր ես չեմ պատրաստվում դա անել, չնայած միգուցե դեռ վերադառնանք այս հարցին, բայց իրականում եթե փորփրենք, անհավանական բաներ կգտնենք: Դրանք կա՛մ զուգադիպություններ են, ինչին ես չեմ հավատում, կա՛մ հիմնավորումներ, որոնք ավելի ամուր կդարձնեն ձեր հավատը և կօգնեն հասկանալ, թե ինչպես է հնագույն այդ դավանանքը արմատավորվել այդ տարածաշրջանում: Մենք Ամերիկյան ենք անվանում ազգերի խառնարան, բայց եկեք պատկերացնենք Փոքր Ասիան՝ վայր, որտեղ անընդհատ գալիս ու գնում, գալիս ու գնում էին տարբեր ցեղախմբեր: Դա շատ հետաքրքիր է և միանգամայն այլ ուսումնասիրության նյութ կարող է դառնալ: Նայելով այդ մարդկանց՝ շատ ավելի լավ պատկերացում կարող ենք ունենալ այն մասին, թե ուրիշ ինչ խնդիրներ են եղել Կողոսիայում:

Օրինակ՝ մի տեղ ասվում է, որ Կողոսիայում Պողոսը ճիշտ ուղու վրա է դրել մարդկանց: Բայց այստեղ խոսքն այն փաստի մասին է, որ այդ մարդիկ երկրպագում էին հրեշտակներին: Հետաքրքիր են այդ վայրում արված պեղումների արդյունքները, չնայած որ դրանք եղել են կարճատև և ոչ խորքային պեղումներ և ընդգրկել են որպես Կողոսիա հայտնի այդ տարածքի միայն մակերևութային շերտը: Պեղումներ են արվել նաև նրա հարևան Հիերապոլիս քաղաքում: Հիերապոլիսն ու Լաոդիկիան այն ժամանակներում շատ կարևոր կենտրոններ էին: Հիերապոլիսում պեղումներ են արել Քվեբեկի Լավալի համալսարանի ներկայացուցիչները: Դա նախորդ դարի 60-ականներին էր՝ մոտավորապես 1961-1963 թվականներին: Եվ այն, ինչ նրանք հայտնաբերել են այնտեղ, շատ հետաքրքրաշարժ է: Նրանք գտել են գերեզման, որում

հուղարկավորված էին Պաղեստինից եկած մարդիկ: Դա Փիլիպպոսի և Ենթադրաբար Նրա դուստրերի գերեզմանն է, որոնք մարգարեացել են:

Ձեզ դա ծանոթ է թվում, այնպես չէ՞, որովհետև այդ մարդկանց մասին դուք գիտեք Աստվածաշնչից: Այն, ինչ հայտնաբերվել է այնտեղ, պատկանում է հինգերորդ դարին: Մենք նաև գիտենք, որ այնտեղ ևս մի շինություն է կանգնեցված եղել, որը հայտնի է Փիլիպպոսի մատուռ անվամբ: Իսկ ինչու է դա կարևոր: Մենք գիտենք, որ դրանք հինգերորդ դարի գտածոներ են: Մատուռ բառը ծագում է հունարեն «martyrion» բառից, իսկ հունարենում «ion» վերջածանցը վայր է ցույց տալիս: «Martyr» արմատն էլ հունարեն նշանակում է «նահատակ»: Այսպիսով, դա նշանակում է կա՛մ Փիլիպպոսի վկայարան, կա՛մ Փիլիպպոսի նահատակություն. դա մի բան է, որը Նրա հիշատակին կանգնեցվել է Յիերապոլիսում:

Եվ ես կարծում եմ, որ այստեղ շատ հետաքրքիր բաներ կան, քանի որ մենք հաշվի ենք առնում մի շարք պատմական փաստեր, և երբ ես ասում եմ պատմական, ես նկատի ունեմ աշխարհիկ աղբյուրների ծանրակշիռ պատմությունը, այլ ոչ թե աստվածաշնչյան: Եվ մենք բավականաչափ տեղեկատվություն ունենք, որպեսզի պատկերացում կազմենք այդ հասարակության մասին: Ինչպես արդեն ասացի, Կողոսիայում մեծ թվով պաղեստինցի եկվորներ կային: Դուք կասեք՝ դե իհարկե, չէ որ այն շատ մոտ էր գլխավոր առևտրային ճանապարհին: Այո, գնալով դեպի արևելք և արևմուտք՝ կհասնեիք մի քանի խոշոր քաղաքների: Բայց պատմական և եկեղեցական տեսակետից այստեղ որոշ լավ տեղեկություններ կան: Օրինակ՝ 2-րդ դարի առաջին կեսին Յիերապոլիսում Պապիաս անունով մի եպիսկոպոս կար: Ենթադրաբար նա անձամբ ճանաչել է Յովհաննես առաքյալին: Յովհաննեսը Քրիստոսի այն աշակերտն է, որն աքսորվել էր Պատմոս կղզի: Մինչ այդ երկար ժամանակ Նրա տունը եղել է Եփեսոսը: Այդպիսով, Ավետարանի մեկնաբանությունը ըստ Պապիասի սկսում է լայնորեն կիրառվել արևելյան և արևմտյան եկեղեցիների կողմից:

Եթե դուք ուսումնասիրում եք եկեղեցու պատմություն, որը կապված է այս տարածաշրջանի հետ, ուրեմն հաջորդ կարևոր բանը, որ պիտի իմանաք, Մոնտանուս անունով մի մարդու մասին է: Նա այստեղ է հասել մեր թվարկության մոտավորապես 150-ական թվականներին, նա ընկել է տրանսի մեջ և սկսել է մարգարեություն անել: Մոնտանուսը և Նրա հետևորդները՝ մարգարեներն ու մարգարեուհիները, սկսում են կանխագուշակել ապագան: Եվ այս ամենը հիանալի կլիներ, քանի որ նա ասում էր, որ մարգարեություններ է անում Սուրբ Յոզու գործությամբ: Բայց այստեղ կա մի բայց: Այս հետաքրքիր երևույթը փաստացի դարձել է հերետիկոսական ուսմունքի շատ խորը և առանցքային գիծ, և սկսել է ներթափանցել եկեղեցի:

Տեսեք, Մոնտանուսը և Նրա հետևորդները, որոնց անվանում են մոնտանիստներ, հավատում էին, որ այդ շնորհը տրված է միայն իրենց: Միայն

իրենք են օժտված Սուրբ Յոզու գործությամբ: Իսկ դա հակասում է Աստվածաշնչին: Փաստորեն բացառապես քարոզների միջոցով նրանք իրենց են վերագրել մարգարեությունը և մարգարեական հիմունքները, և ստացվել է, որ ըստ էության այն, ինչ արել է Քրիստոսը, բավարար չէ, Էլի բան կա անելու:

Եվ ինչպես մենք արդեն տեսնում ենք, այսօր էլ դա շարունակվում է: Ես միլիարդ անգամ ասել եմ ձեզ, այո, մի փոքր չափազանցված եմ ասում, որ ոչ մի նոր հայտնություն էլ չկա:

Ցանկացած մեկը, ով կգա և կասի, որ ունի նոր հայտնություն, ավելացնելու նոր բան, դուք կիմանաք, որ դա հնարավոր չէ: Աստվածաշունչն ասում է, որ չի լինելու ոչ մի այլ հայտնություն կամ, եթե կուզեք, անվանեք դա հայտնության նշան կամ խոսք, բացի Յիսուս Քրիստոսից:

Դա վերջին նշանն ու պատգամն է, որն Աստված թողել է մեզ այստեղ, և երբ նա կրկին վերադառնա, դա հայտնություն կլինի նաև բոլոր նրանց համար, ովքեր ժամանակին ոչինչ չեն լսել կամ չեն կարդացել: Բայց հետաքրքիրն այն է, որ այդ հարցը շատ ավելի խորքային է, և երբ կարդում ենք եկեղեցու պատմությունը, տեսնում ենք, որ այդ մարդիկ մեծ բանավեճերի պատճառ են դարձել: Նույնիսկ մի քանի եկեղեցական ժողով է անցկացվել, որոնցից մեկի ընթացքում որոշվել է պարզապես ազատվել նրանցից: Քարոզվում էր օրինականություն և նմանատիպ բարոյական խստություն: Օրինակ՝ պաս պահող մարդուն նրանք ասում էին, որ պետք է 2-3 անգամ ավելի շատ պահես, որպեսզի այն ընդունվի: Կամ օրինակ՝ եթե դու Մոնտանուսի և նրա ուսմունքի հետևորդն էիր, դու չէիր կարող չարչարանքներից խուսափել: Այլ տարբերակ չկար: Եվ վերջապես շատ կարևոր է, որ դուք լսեք ու իմանաք մի բան, ինչը հիմա կասեմ: Դա մոնտանիստների հետ կապված խնդրի մի մասն է միայն, բայց այն հանգեցնում է հերետիկոսության հետ կապված մի շարք այլ խնդիրների, որոնք բոլորը միավորված են մեկ ընդհանուր գաղափարի շուրջ՝ խեղաթյուրել Ավետարանը, ինչպես նաև խեղաթյուրել հավատացյալների հետ կապ ունեցող այլ բաներ ևս: Մոնտանիստները քարոզում էին, որ ամուսնությունն ընդհանրապես չի խրախուսվում, և որ ավելի լավ է լինել ամուրի և միայնակ: Քրիստոսի վարդապետությունը երբեք այդպիսին չի եղել: Յակոբյան դեպքում դուք չէիք տեսնի, թե ինչպես է Քրիստոսը գնում բժշկելու Պետրոսի զոքանչին, ով տենդի մեջ պառկած էր: Ու չնայած որ ժամանակակից կյանքի հետ կապված շատ հակասություններ կան այնտեղ, մարդկանց որոշ խմբավորումներ դա ուսմունք և դոգմա են անվանում: Իսկ այդ մարդիկ չեն առաջնորդվում Աստվածաշնչով և քրիստոնեության մեջ տեղ չունեն:

Այսօր ես խոսելու եմ հերետիկոսության մասին: Երբեմն ստիպված ես լինում դա անել, որպեսզի կարողանաս ասելիքդ տեղ հասցնել: Թույլ տվեք պարզապես ավարտել այն փոքրիկ պատմությունը, որը սկսել եմ, որովհետև ես հակում ունեմ թեմայից շեղվելու: Ինչ-որ մեկիդ մոտ երբևէ հարց առաջացե՞լ է, ձեզանից ոմանք միգուցե գիտեն պատասխանը, և դա նորմալ է, բայց երբևէ տվե՞լ եք այս հարցը:

Եթե այդ տարածաշրջանը, խոսքը այժմյան Թուրքիայի տարածքի մասին է, քրիստոնյա աշխարհի համար այդքան կարևոր կենտրոն էր եկեղեցիներ հիմնելու, Աստվածաշունչ քարոզելու, տարածելու և մնացած ամեն ինչի ամար, ի՞նչ է եղել քրիստոնեության հետ: Ինչպես արդեն ասել եմ, այսօր ես չեմ պատրաստվում խոսել դրա մասին, բայց եթե հետևեք պատմական փաստերին և հասնեք 1922-23 թվականներին ու Լոզանի պայմանագրին, կիմանաք մի շատ հետաքրքիր փոխանակման մասին:

Այդ տարածքում մի կողմից ապրում էին քրիստոնյաներ, որոնք ըստ ամենայնի հաստատվել էին Թուրքիայում, իսկ մյուս կողմից՝ հույներ, որոնք ընդունել էին մահմեդականություն: Այստեղ մի տեսակ մարդկանց փոխանակում է տեղի ունեցել: Ըստ այդ համաձայնագրի՝ մարդիկ կարող էին փոխել իրենց բնակավայրը՝ ելնելով կրոնական համոզմունքներից: Ուստի եթե քրիստոնյա ես, գնա Յուստան. այսինքն՝ եթե ապրում ես Թուրքիայում և քրիստոնյա ես, տեղափոխվում ես Յուստան, նույնիսկ եթե ծագումով թուրք ես: Իսկ եթե հույն ես, որը մահմեդական է դարձել, այդ փոխանակման համաձայն տեղափոխվում ես մահմեդական երկիր: Եվ դա արվում էր միայն կրոնի հիման վրա, ուրիշ ոչինչի:

Այդ պատճառով այսօր մենք ունենք քրիստոնեության շատ քիչ և թույլ նշմարվող հետքեր, այն գրեթե ամբողջությամբ արմատախիլ է արվել: Եվ երբ մտածում ես, հասկանում ես, որ դա ուղղակի աներևակայելի է: Այդ ամենից մենք 2000 տարվա հեռավորության վրա ենք, և տեսեք, թե ինչ է տեղի ունեցել այդ տարիների ընթացքում: Դրա համար եմ ասում, որ պատմությունը չափից դուրս կարևոր է:

Աշխարհի ամենահայտնի մարդկանցից ոմանք, որոնց եթե պատմությունն էք ուսումնասիրում, ամենայն հավանականությամբ գիտեք, ծագումով այս տարածքից են: Նրանցից մեկը Պյութագորասն է: Իրականում հայտնի մարդիկ շատ կան, օրինակ՝ Յերոզոտոսը՝ պատմության հայրը: Մի մարդ էլ կա, ով ծագում է Կիլիկիայից, Տարսոն կոչվող վայրից, որը մտնում է իմ նշած տարածքի մեջ: Նրա անունը Սողոս է, որը դարձել է Պողոս առաքյալ: Այսպիսով, սա շատ կարևոր տարածաշրջան է: Իսկապես կարևոր, քանի որ Գործք Առաքելոց գրքում ասվում է, որ առաքյալներն առաջին անգամ քրիստոնյա են կոչվել Անտիոքում, որը կրկին այս աշխարհագրական տարածքում էր: Յետևաբար մենք չենք կարող պարզապես անցնել նրա կողքով և ասել. «Օ՛ր, Կողոսիա, լավ, մենք գնացինք»: Քանի որ այստեղ այնքան շատ տեղեկատվություն կա: Եթե անգամ պատմությունն չէք սիրում, ես համառորեն խորհուրդ եմ տալիս թեկուզ շատ հակիրճ, կարճ և կոնկրետ իմանալ իրար հաջորդող մարդկային հոսքերի և նրանց մղած պատերազմների մասին: Դա կօգնի ձեզ շատ ավելի լավ պատկերացում կազմել այն մասին, թե որքան անհնար էր քրիստոնեության համար պահպանել իր գոյությունը այս տարածաշրջանից դուրս, բայց այն գոյատևել է, և թե ինչպես են նրա թեկուզ շատ չնչին մնացորդներ պահպանվել երկրի վրա այն դեպքում, երբ անդադար իրար էին հաջորդում արշավանքներ, պատերազմներ, նոր բնակիչներ

և այլն: Մի խոսքով, դուք հասկանում եք ինձ: Ինձ հենց դա է գրավում: Այստեղ հստակ պատասխան չկա, բայց իմ կարծիքով դա չափազանց հետաքրքիր է:

Այժմ անցնենք բուն գրություններին: Բացենք Աստվածաշունչը: Գտնենք Կողոսացիների գիրքը: Նախորդ շաբաթ մենք սկսել ենք այս խոսքերից. «Պողոսը՝ Զիսուս Քրիստոսի առաքյալը Աստծո կամքով, և Տիմոթեոս եղբայրը՝ Կողոսիայում Քրիստոսով եղող սրբերով ու հավատացյալ եղբայրներով»:

Ես կանգ կառնեմ այստեղ, քանի որ ուզում եմ խոսել հետևորդների մասին: Նախորդ շաբաթ մենք անդրադարձել ենք ուղարկվածին, մենք գիտենք, թե ով է նա, Պողոսը գրի է առել դա: Ես ձեզ ասել եմ նաև, որ Տիմոթեոսին այստեղ հիշատակելու շատ պատճառներ կային, որոնցից բացի նրան ճանաչում էին նաև որպես Պողոսի գործընկեր, նրա ուղեկից, և այդ մարդիկ շատ լավ գիտեին նրան: Այսպիսով, ունենք ուղարկված և նրան հետևողներ:

Այս ուղերձս ես կվերնագրեմ հենց այդպես՝ «Հետևորդները»: Այստեղ նշված են սրբեր, հավատացյալներ և եղբայրներ. նրանք Քրիստոսի հետևորդներն են: Հետաքրքիրն այն է, որ «Քրիստոսով եղողների» մասին խոսելիս եկեղեցին չի հիշատակվում: Դա իհարկե ենթադրվում է, մենք գիտենք, որ դա եկեղեցու համար է գրված: Իսկ եթե մենք տարակուսում ենք, եթե վստահ չենք, որ այդպիսի գրություն կա, որում ասվում է, որ դա պետք է տարածվի և հնչեցվի այլ եկեղեցիների կողմից: Բայց մենք հստակ գիտենք, որ դա ամենավերն է եկեղեցու հետ: Հունարեն «ekklesia» բառը, որը ես մեջբերել եմ, այստեղ հիշատակված չէ, բայց կենտրոնանալ դրա վրա պետք չէ: Ինչո՞ւ, որովհետև այլ ուղերձներ և ողջույններ ևս կան՝ ուղղված, օրինակ, հռոմեացիներին, փիլիպպեցիներին և եփեսացիներին, որտեղ նմանատիպ ողջույնի խոսքեր են: Ուստի դրանում ես ոչ մի խնդիր չեի տեսնի: Բայց այն, ինչում այսօր ես խնդիր եմ տեսնում, միգուցե զարմացնի ձեզ, միգուցե և ոչ: Սակայն մինչ դրան անցնելը նախ ուզում եմ խոսել սրբերի մասին: Այսպիսով՝ սրբեր:

Փորձենք ավելի լավ հասկանալ այս բառի իմաստը, որը նկարագրում է վերոնշյալ գրության մեջ հիշատակվող մարդկանց. մարդկանց, ում դրանք ուղղված են: Եկեք հետ գնանք դեպի Հին Կտակարան, որպեսզի կարողանանք դա անել և շատ հստակ պատկերացում կազմել մի բանի մասին, ինչն ինձ լսող մարդկանցից ոմանց հաստատ դուր չի գա, բայց ինչ արած, c'est la vie: Դե ինչ, եկեք սկսենք:

Առաջին հերթին Հին Կտակարանում մենք ուշադրություն չենք դարձնում հունարեն hagios բառին, սակայն ուշադրություն ենք դարձնում եբրայերեն հնչյունադարձությամբ ԲԴԾ բառին, որը կախված ձայնավորներից կարդացվում է քաղոշ, քաղեշ, քողոշ: Իսկ եթե սկսենք Ծննդոցից, ապա այստեղ հասկացությունները կամ բառերը շատ ավելի քիչ են: Ինչ-որ սուրբ բան մատնանշող հասկացություններ կան, ինչ-որ սրբություն, բայց որևէ կոնկրետ բառ չկա: Իսկ ահա երբ հասնում ենք Ելից գրքին, արդեն հստակ ձևակերպումներ ենք տեսնում: Առաջին անգամ «սուրբ» բառն այստեղ հանդիպում է Ելից 3:5-ում,

որտեղ գրված է, որ երբ Մովսեսը տեսնում է, թե ինչպես է մորենու թուփը վառվում կրակի բոցով, բայց չի մոխրանում, նա լսում է Աստծո ձայնը, որն ասում է նրան. «Մովսես, ոտքերիդ կոշիկները հանի՛ր, քանի որ այն հողը, որի վրա կանգնած ես, սուրբ է»: Հիմա ուզում եմ հարցնել ձեզ. արդյո՞ք դա նշանակում է, որ հողն ինչ-որ բարի գործ է արել, արդյո՞ք այն հրաշք է գործել: Ես այդպես չեի մտածի, չէ որ դա պարզապես հող է, ճի՞շտ է: Բայց եթե շարունակեք կարդալ Ելիցը և կարդաք այն ամբողջությամբ, կտեսնեք, որ «սուրբ» բառն այստեղ բավականին հաճախ է հանդիպում: Այս պահին գրառումներս ձեռքիս տակ չեն, որպեսզի հստակ ասեմ, բայց մոտավորապես 70 անգամ: Միգուցե ոչ 70, այլ 50, չգիտեմ, հաջորդ շաբաթ երբ հանդիպենք, կասեմ ձեզ իրական թիվը: Ամեն դեպքում, մարդկանց մասին խոսելիս այն շատ քիչ է գործածվել: Լինի դա 50, թե 70 անգամ, բայց Ելիցում այս բառը մարդ արարածի է վերագրված եթե չեմ սխալվում 3 կամ միգուցե 5 անգամ, բայց դրանից ոչ ավելի: «Սուրբ» բառով հիմնականում բնութագրված են վայրեր, լեռներ, որտեղ կա Աստծո ներկայությունը: Իսկ ամենից շատ այն կիրառված է սրբազան զգեստների, սուրբ օծման յուղի, սրբազան անոթների կամ խորանի կառուցվածքային տարրերի մասին խոսելիս. այս ամենը բնութագրված է «սուրբ» բառով: Եվ ինչպես արդեն ասացի, այդ 50 կամ 70 հիշատակումներից միայն 3-5-ն են վերաբերում մարդկանց, մասնավորապես քահանաներին: Եկեք մի պահ համարենք, որ իմ նշած նվազագույն թիվն է ճիշտը՝ 50-ը, և այդ 50 անգամից «սուրբ» բառը մարդկանց է վերագրվել առավելագույնը 5 անգամ, մնացած բոլոր դեպքերում խոսքը եղել է անշունչ առարկաների մասին: Կարո՞ղ եմք արդյոք այս անշունչ առարկաների մասին ասել, որ նրանք հրաշքներ են գործել, որ նրանք առաքինի և յուրահատուկ են եղել շնորհիվ իրենց կատարած ինչ-որ անշունչ արարքների: Դա հռետորաբանություն է: Դա հիմարություն է: Եվ ես դա ասում եմ նրա համար, որպեսզի այժմ ներկայացնեմ իմ տեսակետը, այնուհետև ես վերջ կտամ դրան, լա՞վ:

Ես սկսել եմ կարդալ դա և մտածել, որ սա իմ հնարավորությունն է, ես ամեն ինչին նայում եմ որպես հնարավորություն, և ուրեմն սա իմ հնարավորությունն է պարզելու այն, ինչը երկար ժամանակ անհանգստացնում է ինձ: Պատկերացնում եք, դու մեծանում ես և քեզ անընդհատ ասում եմ դա՝ քո հովանավոր սուրբ... և տալիս են սրբի անունը: Կախված քո ծննդյան օրից և այն եկեղեցուց, որին դու պատկանում ես, դու ունես հովանավոր սուրբ, որն օժտված է յուրահատուկ բաներ անելու կարողություններով, փոքրիկ նինձյայի նման, որին կարող ես դնել գիշերասեղանիդ, և նա կպաշտպանի քեզ կամ ամեն ինչ կանի քեզ համար, այնպես չէ՞: Լավ է ինչում: Երեխայի համար դա շատ զիլ է հավանաբար:

Ահա թե բանն ինչում է: Եվ դա ինձ շատ է անհանգստացնում: Հիշո՞ւմ եք, ես ձեզ ասել եմ, որ ոչ ոք չի կարող ավելի շատ հարցեր ունենալ, քան ես: Ինձ իսկապես անհանգստացնում էր, թե ինչու և ինչպես կարող են կաթոլիկներն ու բողոքականները սրբերի հարցում այսքան տարակարծիք լինել: Ի՞նչ է տեղի

ունեցել: Ես կարդացել եմ այս գիրքը: Ահա այն, սա Աստվածաշունչն է: Ինձ համար միևնույն է, թե նրա որ թարգմանությունն եք դուք կարդում, որպեսզի լսեք իմ մեկնաբանությունը: Այս գրքի պարունակությունից, նրա բովանդակությունից պետք է բխեն ձեր մտքերը, ձեր գաղափարները, երբ դուք պատրաստվում եք ձեզ քրիստոնյա կոչել կամ նույնիսկ եթե հրեա: Այս գրքի առաջին կեսը՝ Հին Կտակարանը, որը նրանք կարդում են, պիտի դառնա ձեր կատալիզատորը, ձեր GPS-ը, ձեր ամբողջական ուղեցույցը ձեր հավատքում կողմնորոշվելու համար:

Այսպիսով, իմ հարցը նրանում է, թե ինչպե՞ս կարող էին պառակտվել երկու երևույթներ, որոնք ըստ Էուբայան սկիզբ են առել որպես մեկ ամբողջություն, և այժմ էլ մասնատված լինել 2 կամ միգուցե բազմաթիվ այլ կտորների: Ինչպե՞ս կարող են Սուրբ գրքի նույն տողերը այսքան տարբեր մեկնաբանություն ունենալ: Մարդկանց մի խումբ ասում է. «Դե, սա մահացած մարդկանց՝ սրբերի մասին է, սուրբ նշանակում է մահացած, մարդ, որն արդեն էլ չկա»: Մինչդեռ մենք, կարդալով այս գիրքը, հստակ տեսնում ենք այս տողերը. «Քրիստոսով սրբերին ու հավատացյալ եղբայրներին, որոնք Կողոսիայում են»: Այսինքն՝ այն ժամանակ, երբ Պողոսը գրի է առել այս տողերը, նրանք եղել են այնտեղ: Հետևաբար նրանք չէին կարող մահացած լինել, այնպես չէ՞: Եվ եթե դուք կարդաք ամբողջ Նոր Կտակարանը, ապա բազմաթիվ անգամ կհանդիպեք ողջույնի նմանատիպ խոսքերի՝ սրբերին, որոնք եկեղեցում են, սրբերին, որոնք այստեղ են և այլն: Եվ այդ մարդիկ համենայն դեպս այն օրը, երբ այդ տողերը գրի են առնվել, ողջ են եղել:

Ի՞նչ է պատահել: Որտե՞ղ ենք մենք սխալվել: Եվ այդ հարցն այստեղ է՝ իմ գլխում, և դա մի փոքր վախեցնող է:

Ուստի ես իմ խոսքը դրանից եմ սկսել՝ մտածելով մեկընդմիջտ պարզաբանել այս ամենը: Եթե ինչ-որ մեկը կցանկանա զայրանալ, թող անի դա: Իսկ եթե նրան դուր կգա այն, ինչ նա կլսի, կարող է փորձել իմանալ ավելին և մի օր ի վերջո հասկանալ, որ եթե մենք քրիստոնյա ենք, ուրեմն առաջնորդվում ենք այս գաղափարներով, և ոչ որոշ մարդկանց այն պատկերացումներով, թե ինչին մենք պետք է հավատանք: Եվ հենց այստեղ մի մեծ խնդրի ենք բախվում: Տեսեք, Պողոսն օգտագործում է «սուրբ» բառը: Ես կգրեմ նրա հունարեն տարբերակը: Հունարեն հնչյունաբանությամբ, բայց անգլերեն տառերով կգրեմ: Այդպես ավելի հեշտ կարտասանեք: «Hagios», երբեմն նաև «hagioi»՝ կախված նրանից, թե ինչ ենք կարդում: Մենք գիտենք, որ սրանք մտնում են հունարեն այն բառերի խմբի մեջ, որոնց բառամիջում կա «ag» մասնիկը: Այսպիսով՝ կենտրոնում ունենք «ag», նրանից առաջ էլ՝ «h». «hagios»:

Իրենց կազմության մեջ այս մասնիկն ունեցող բոլոր բառերը ծագել են հնդեվրոպական լեզվաընտանիքից, ավելի կոնկրետ՝ հին հնդկերենից: Գիտեմ, տարօրինակ է հնչում, բայց ծագման աղբյուրն է հին հնդկերեն «yaj», որը նշանակում է «զոհաբերել», կամ «yajyah» բառը, նշանակությունն է «պաշտամունքի արժանի»: Այսպիսով, ունենք այդ բառից ածանցված ինչ-որ



կազմութիւն: Եկեք դիմենք ցանկացած աստվածաբանական բառարանի, իսկ այն ոչ կաթոլիկ է, ոչ էլ բողոքական. ընդամենը բառարան է: Ինչ հավատք էլ դուք ունենաք, կարող եք միշտ վստահաբար դիմել այս բառարանին: Այն անկողմնակալ է: Դրանք պարզապէս բառեր են, հունարեն բառեր Նոր Կտակարանից: Եվ եթե դա ձեզ հետաքրքիր է, կարող եք գտնել հստակ տեղեկություններ այն մասին, որ «սուրբ» բառը, ինչպէս և նրա եբրայերեն տարբերակը, երբեք չի գործածվել որևէ նշանակալից մարդու կամ նրա արած բարի գործերը բնութագրելու համար: Այդ բառն ինքնին, իր բնույթով ոչ մի ամենաբարձր չունի այդ ամենի հետ: Եկեք մի պահ կանգ առնենք «սուրբ» բառի եբրայերեն տարբերակի վրա, որպէսզի համոզվենք, որ նրա իմաստը շատ չի փոխվել: Եբրայերենում շատ հետաքրքիր բառերի խումբ ունենք՝ QDSH: Յենց այդ բառերն էլ կդիտարկենք: Այս խմբի բառերը դառնում են գոյականներ, երբ ավելացնում ենք «vav» մասնիկը: Եթե վերցնենք դրանցից միայն այս երկուսը՝ «qoph» (քօֆ) և «daled» (դալեդ), եբրայերենի ստուգաբանության համաձայն կստանանք «բաժանել» կամ «առանձնացնել» բառը: Այսպիսով, պարզ է դառնում, որ եթե մինչ այդ այն գործածվում էր սովորական երևույթներ բնութագրելու համար, ապա այժմ այն բաժանվել կամ առանձնացվել է դրանից և սկսել է գործածվել աստվածային երևույթներ նկարագրող բառերի հետ: Իսկ դա կարևոր է: Այն չի կարող ամբողջովին լինել եբրայերեն կամ քրիստոնեական բառ, քանի որ հունական մշակույթում այդպէս անվանել են տաճարների պաշտամունքային մարմնավաճառներին՝ hagios կամ hagioi: Եկեք հետևենք այս բառի հետագա զարգացմանը: Նույնիսկ հույներն էին հասկացել, որ եթե տաճարի մարմնավաճառին անվանում են hagioi, ինչպէ՞ս կարող են կիրառել այդ բառը բարու և առաքինության մասին խոսելիս: Կարևոր չէ: Սա հարցի մեկ այլ կողմն է: Եկեք վերադառնանք եբրայերեն QDSH-ին և տեսնենք, թե որտեղ և ինչպէս է գործածվել «սուրբ» բառը: Ահա մի օրինակ ևս՝ երբ Աստված խոսեց Մովսէսի հետ, ևա ասաց, որ շաբաթը սուրբ օր է, շաբաթը սուրբ է: Դա այն օրն է, որն առանձնացված է մյուսներից: Շաբաթվա մյուս բոլոր օրերի նման այն օրացույցում է, բայց Աստված ասել է, որ այդ օրը մյուսներից պետք է առանձնացվի: Այն շարունակում է մնալ իր տեղում և ունենալ նույն իմաստը, բայց Աստված ասել է. «Այդ օրն առանձնացված է»: Յենց դրա համար էլ այն կոչվել է «սուրբ»: Եվ դա չի կարող ունենալ նույն իմաստը, ինչ բարի, լավ և աստվածահաճո գործերը: Այն կարող է ընկալվել միայն որպէս Աստծո կողմից ընտրված մի բան: Եվ եթե ես դա ճիշտ եմ հասկանում, իսկ ես ճիշտ եմ հասկանում, դա երբեք հիմնված չի եղել մարդու արարքների վրա: Եկեք խոսենք այն քահանաների մասին, որոնք կոչվել են սուրբ, կրել են սուրբ զգեստներ և օձվել են սուրբ յուղով: Իրականում նրանք սուրբ էին համարվում միայն այդ արարողակարգերն իրականացնելու պահին: Իսկ դրանից հետո նրանք սովորական մարդիկ էին. մտածեք այդ մասին: Նրանք ամեն օր տուն էին գնում՝ իրենց կանանց մոտ, ունենում էին երեխաներ և ապրում էին սովորական

կյանքով: Եվ այնպես չէ, որ այդ մարդիկ մի տեսակ հյուճված էին, ունեին այնպիսի դեմքի արտահայտություն, ասես հենց նոր կհտրոն էին կծել, և այդ ամենում ինչ-որ սուրբ բան կար: «Եթե այդպիսի տեսք ունես, ուրեմն սուրբ ես, ուրեմն քո կյանքում երջանկության ոչ մի ակնթարթ երբեք չի եղել: Դու սուրբ ես»: Ոչ, իհարկե: Չնայած մի քանի անգամ ես տեսել եմ այդպիսի մարդկանց:

Ուզում եմ առանձնացնել այս մոտեցումը, այս միտքը, որովհետև դա շատ հետաքրքիր է, թե ինչպես կարող էր նման գաղափարախոսությունը այդքան հեշտ վերածվել աշխարհի ամենախոշոր կաթոլիկ ուսմունքներից մեկի: Յուսու ունեմ՝ ներկայացվող թվերը ճիշտ են: Վերջին տվյալներից տեղյակ չեմ, բայց եթե չեմ սխալվում, 5 տարի առաջ Կաթոլիկ եկեղեցին իր ուսմունքների բավականին մեծ թվով հետևորդներ ունեցել է: Ես դեմ չեմ ոչ կաթոլիկներին, ոչ բողոքականներին և ոչ էլ անգլիկաններին: Ես դեմ եմ նրան, որ մարդիկ իրենց ինչ-որ բան են վերագրում առանց այս գիրքը կարդալու և առանց հասկանալու, որ դա բացահայտ հակասում է Աստծո խոսքին: Եվ պետք չէ սրբացնել այն, ինչը ոմն մեկը եկեղեցու մի մաս է հռչակել: Ո՛չ: Ընդամենը մի մարդ կա, ով հայտարարել է, որ սա եկեղեցու մասն է, և նրա ձայնը բխում է Սուրբ Յոզուց, և հենց նա է ոգեշնչել մատենագիրներին գրի առնել այս 66 սրբագան գրքերը:

Ինձ երբեմն հարցնում են. «Լավ, իսկ սրբե՞րը»: Դե ինչ, եկեք խոսենք սրբերի մասին: Բայց մի պահ ներողամիտ եղեք, որովհետև հավանաբար ես էլ չեմ անդրադառնալու դրան: Եթե մենք կարողանանք հասկանալ Կաթոլիկ եկեղեցու սրբությունների ու սրբերի պատմությունը և զարգացումը, ապա կկարողանանք տարանջատել ապատեղեկատվության շատ ամուր և խորը շերտեր: Եկեք հետ գնանք 10-րդ դար: Ըստ Կաթոլիկ եկեղեցու պատմական գրքերի և գալուստի մատյանների՝ 10-րդ դարում ապրել է Ուլիխ անունով մի մարդ: Նա արել է կանխագուշակություններ, որոնցով բավականին երկար ժամանակ հետո հայտնի է դարձել Մարտին Լյութերը: Բայց նա եպիսկոպոս էր, ով պարզապես իր գործն էր անում և, կարծում եմ, ոչնչով չէր տարբերվում հազարավոր այլ եպիսկոպոսներից: Սակայն նրա մահից որոշ ժամանակ հետո ժողովուրդը դիմում է այդ դարաշրջանի պապին և խնդրում է դասել նրան սրբերի շարքը: Ըստ պատմական աղբյուրների՝ հիմք ընդունելով այս դեպքը՝ 10-րդ դարից ի վեր մարդկանց սկսում են դասակարգել հատուկ խմբերի:

Բայց կաթոլիկ եկեղեցու ուսմունքը սկսել է կոպտորեն շեղվել այս գրքից: Խոսքն այն մասին է, որ Աստվածաշնչում ամենուր սուրբ են կոչվում այն մարդիկ, որոնք պարզապես իրենց վստահել են Տեր Յիսուս Քրիստոսին: Սուրբ են կոչվում նրանք, ովքեր դեռևս մեղսավոր են, բայց շնորհքով փրկություն են ստացել. շնորհքով, այլ ոչ թե գործով: Դու փորձում ես ուղղել ամեն ինչ: Բայց ծառայելով կատարյալին՝ դու կատարյալ չես դառնում: Չկան վեհ ու առաքինի բարերարություններ կամ մեծ բարերարներ: Որոշ մարդիկ կարող են համարվել ավելի լավը, քան մյուսները, բայց Աստծո համար մենք բոլորս նույնն ենք: Ես Սուրբ Գրքից մի մեջբերում կանեմ, որն այս եկեղեցին դրոշակ է դարձրել.

Հռոմեացիներին 3:23. «Որովհետև բոլորը մեղանշեցին ու գրկվեցին Աստծու փառքից»: Չի ասվում «ոմանք», ասվում է «բոլորը»: Այսպիսով, կարելի է մի եզրահանգման գալ. եթե բավականաչափ ուսումնասիրեք այս գիրքը, կհասկանաք, որ սրբերի և սրբության մասին իմ ներկայացրած տեղեկությունների մեծ մասը այս գրքում չկա և երբեք էլ չի եղել: «Սուրբ» բառը ննջեցյալների մասին խոսելիս երբեք չի գործածվել:

Ահա թե ինչից է սկսվել ամեն ինչ: Մոտավորապես 1230-1240-ական թվականներին եկեղեցու վրա բավականին մեծ ճնշում էր գործադրվում, քանի որ բոլորն ուզում էին սուրբ հռչակվել: Պապն ասում է. «Չերիք է: Միայն ես կարող եմ ինչ-որ մեկին սրբադասելու որոշում կայացնել: Իսկ դուք, հասարակ մահկանացուներ, լռեք, պա՞րզ է»: Ահա թե ինչ է այն ժամանակ տեղի ունեցել այնտեղ՝ ըստ շոտլանդացիների: Եվ դա իսկապես շատ հետաքրքիր է: Խնդրում եմ, չգայրանաք ինձ վրա, բայց ըստ կաթոլիկ եկեղեցու վարդապետության՝ պապը Քրիստոսի տեղակալն է և նա անսխալական է: Իսկ հիմա ինձ կամ էլ ինքներդ ձեզ մի հարց տվեք: «Դուք ձեզ երջանիկ համարո՞ւմ եք» հարցի մասին չէ խոսքը, այլ հետևյալի: Եթե այն, ինչ նրանք ասում են, այդպես է, և պապն անսխալական է, ուրեմն նրա ասած ամեն ինչը ճիշտ է, և նա երբեք, երբեք չի սխալվում, այնպես չէ՞. անսխալական հենց դա է նշանակում: Ուրեմն ինչպե՞ս կարող էին նրանք այդքան սխալվել, օրինակ, ժաննա դ'Արկի հարցում:

Նրան վտարում են եկեղեցուց և այրում: «Մենք ուզում ենք համոզված լինել, որ իսկապես ազատվել ենք քեզանից, դրա համար նախ կվտարենք քեզ եկեղեցուց, հետո կայրենք խարույկի վրա»: Իսկ ահա 1909 թվականին ժաննա դ'Արկը ներկայացվում է երանելիացման, ինչը սրբադասման գործընթացի առաջին աստիճանն է: Եվ 1920-ին կամ 30-ին նա դասվում է եկեղեցու սրբերի շարքը: Այն ժամանակ պապն ասում էր. «Նա հերետիկո՞ւ է: Այրե՛ք նրան: Դո՛ւրս արեք եկեղեցուց»: Իսկ պապն անսխալական է: Ինչպե՞ս կարելի է նրան առարկել: Եվ հետո հանկարծ նա սուրբ է դառնում: Ոչ ոք չի՞ ուզում հարցնել, թե ինչպե՞ս դա եղավ: Ուզում եմ ասել, որ մեր հավատքի յուրաքանչյուր հարթության մեջ կան տարրեր, որոնք ավելի ուշադիր պետք է գննել: Եվ ես բարձրաձայնում եմ այս հարցը այն պատճառով, և դա իրոք ինձ շատ է հուզում, որ ես բազմիցս փորձել եմ հարցնել մարդկանց. «Ինչո՞ւ եք աղոթելիս դիմում մի մարդու, ով մահացել է, ում դուք չեք էլ ճանաչել և ում երբեք չեք տեսել, ով չունի ոչ մի գորություն, քանի որ կա միայն մեկը, ով օժտված է գորությամբ, դա Հիսուս Քրիստոսն է: Ինչո՞ւ եք աղոթում ննջեցյալի, ինչո՞ւ եք մոմ վառում մահացած սրբի համար: Ես հասկանում եմ, դրանք ավանդույթներ են, բայց ես մի ապշեցուցիչ բան ունեմ դուրս գրած: Դա մեջբերում է մի կաթոլիկ հոդվածից, որում հստակ օգտագործվում է «ավանդույթ» բառը. «Դա մեր ավանդույթն է»: Բայց չէ՞ որ Աստվածաշունչն ասում է. «Ձեր ավանդույթի պատճառով խախտում եք Աստծու պատվիրանը»:

Այստեղ ես հակասություն եմ տեսնում և համարում եմ, որ իմ պարտականությունն է ձեզ պատշաճ տեղեկություն մատուցել քրիստոնեական ուսմունքի մասին: Իմ նպատակը մարդկանց ծաղրելն ու նվաստացնելը չէ, այլ կրթելը: Ես հոգնել եմ մարդկանցից, որոնք մեկ ժամ անգամ չեն ուսումնասիրել քրիստոնեություն: Նրանք կարող են իրենց ամբողջ կյանքն անցկացնել եկեղեցում, բայց երբեք նույնիսկ մեկ ժամ չծախսել այնպիսի հարցեր առաջ քաշելու վրա, որոնցից ինձ համար պարզ կդառնա, որ նրանք իրոք ուզում են հասկանալ Աստծո խոսքը, այլ ոչ թե այն մարդկանց ուսմունքներն ու խարդախությունները, որոնք ասում են. «Սա կօգնի քեզ»: Ուզո՞ւմ եք հիմնովին հասկանալ, թե ինչու է կաթոլիկ եկեղեցին շարունակում առաջ քաշել այդ ամենը: Ես մի հրաշալի հոդված եմ գտել, որտեղ կա այդ հարցի պատասխանը: Ես համառոտ կներկայացնեմ այն ձեզ: Այնտեղ գրված է, որ եթե մենք կարող ենք մտաբերել մեկին, հատկապես նրան, ով նահատակվել է հանուն իր հավատքի, ուրեմն կարող ենք տեսնել, թե ինչպես է նա նվիրվել Քրիստոսին, և հետևաբար կարող ենք նաև ընդօրինակել նրան: Հիմա լսե՛ք ինձ: Եթե ցանկանում եք ինչ-որ բանի էժանագին կրկնօրինակ լինել, որոշումը ձերն է: Բայց ես անձամբ նախընտրում եմ իրական ուղին: Կամ իրականը, կամ ոչինչ. դա է իմ ընտրությունը: Կամ ես կարող եմ որևէ այլ բան ընտրել, եթե չկարողանամ գտնել իրական քրիստոնեությունը: Իսկ իրական քրիստոնեությանը ես գալիս եմ առաջին հերթին Հիսուս Քրիստոսի միջոցով, երկրորդը՝ Աստծո կողմից նրան տված հոգու, և, ի վերջո, ես Աստվածաշունչ եմ կարդում, և ինձ համար դա է միակ ուղեցույցը, որով ես կարող եմ առաջնորդվել, այլ ոչ թե ինչ-որ մեկնաբանություն, որը չափից դուրս աղավաղվել է մարդկանց բազմություններին հանգստացնելու համար: Սրբության և մահացած մարդկանց սուրբ կոչելու մասին ուսմունքը հենց այդպիսին է:

Եթե սկզբից մինչև վերջ հետևենք Աստծո խոսքին, շատ պարզ և առանցքային մտքեր կգտնենք: Եվս մեկ անգամ մեջբերեմ Ելից 3:5-ը. «Աստված ասաց՝ ոտքերիդ կոշիկները հանի՛ր, քանի որ այն հողը, որի վրա կանգնած ես, սուրբ է»: Քիչ առաջ ես ձեզ հարց էի տվել: Ինչո՞ւ պետք է կաթոլիկ եկեղեցու ուսմունքներն ու չափորոշիչները ծառայեն ինչ-որ նպատակների, կոնկրետ այս դեպքում՝ որևէ մեկին սրբացնելուն: «Մարդը պետք է քրիստոնեական առաքինություններ ցուցաբերի»: Իսկ ի՞նչ է դա նշանակում: Անկախ այն բանից, թե ինչ է դա նշանակում: Կարևոր չէ: Նա պետք է սրբի համբավ ունենա:

Համաձայն եմ: Իմ պահարանում ցեց էր հայտնվել: Այն մի քանի անգրք էր բացել վերարկուիս վրա: Ես սրբի համբավ ունեմ: Չէ՞ որ հրաշք է տեղի ունեցել: Իսկ դա սրբադասման համար անհրաժեշտ պայմաններից 5-րդն է:

Մոտալուտ և անխուսափելի մահվանը դեմ հանդիման կանգնած մարդը պետք է ինքնակամ զոհաբերի իր կյանքը: Սեփական կյանքի զոհաբերության և վաղաժամ մահվան միջև պետք է շատ սերտ կապ լինի: Ի՞նչ:

Լավ, եթե դրանք են սրբության չափանիշները, ես ուզում եմ կրկնել հարցս, քանի որ այդ նույն լեզվում, որից մեզ հայտնի է սուրբ Նահատակներ ձևակերպումը, կան նաև սուրբ հաղորդություն և սուրբ Աստվածաշունչ արտահայտությունները: Դե, այո, Աստվածաշունչը տարբերվում է մյուս գրքերից, այդ հաղորդությունն էլ տարբերվում է հաղորդության մյուս տեսակներից, բայց մեծ հաշվով եթե մի բան առանձնացված է մնացածից, ուրեմն այն պետք է ծառայի կա՛մ ի հիշատակ, կա՛մ ի գոյություն, կա՛մ ի հավատ մեր Աստծո և մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի, ուրիշ ոչնչի: Կրկին մեջբերեմ այս տողերը. «Պողոսը՝ Հիսուս Քրիստոսի առաքյալը Աստծո կամքով, և Տիմոթեոս եղբայրը՝ Կողոսիայում Քրիստոսով եղող սրբերով ու հավատացյալ եղբայրներով»: Կամ Փիլիպպեցիների գրքից այս մյուսը կարդամ, որում նույն բանն է ասվում. «Պողոսը և Տիմոթեոսը՝ Հիսուս Քրիստոսի ծառաները՝ Քրիստոս Հիսուսով բոլոր սրբերին, որ Փիլիպպեում են, եպիսկոպոսների ու սարկավագների հետ»: Այդ գրքերի բոլոր ողջույններն ուղղված են սրբերին, որոնք այդ պահին գտնվում են այս կամ այն վայրում, այդ օրը նրանք այնտեղ են, նրանք ողջ են: Ես շատ ժամանակ ծախսեցի իմ այս տեսակետը ներկայացնելու վրա: Բայց դա կարևոր է հասկանալու համար, որ այն, ինչ ես ասում եմ, նվաստացնելու կամ ամոթանք տալու համար չէ: Ես միշտ հարցնում եմ՝ Աստվածաշունչում որտե՞ղ է դա գրված: Ինձ ասում են՝ դա վարդապետություն է: Որտե՞ղ: Կրկնում եմ ևս մեկ անգամ. այս գիրքն իմ ուղեցույցն է: Եվ այն ասում է, որ ոչինչ չպետք է ավելացնել կամ հանել: Ուրեմն ինչո՞ւ է ինչ-որ մեկի գլխում նման միտք հղացել. «Դե, գիտե՞ք, դա լավ բան է: Մենք կվերածենք դա այսինչի»: Ամեն ինչ այդպես է սկսվում: Միգուցե միշտ բարի նպատակով, բայց հետո մարդիկ կապվում են գաղափարին, և այն վերածվում է եկեղեցու վարդապետության, դառնում է եկեղեցու դոգմա:

Ինձ համար դա խնդիր է, որովհետև Պողոսը նույնպես պայքարում էր: Մենք կկարդանք այն ամենի մասին, ինչի դեմ նա պայքարել է այս եկեղեցում: Իմ խոսքը ես սկսել եմ հրեշտակների պաշտամունքից, որպեսզի դուք տեսնեք, թե որքան հեշտ է դա, ես իսկապես ուզում եմ, որ դա հասնի ձեզ, որ դուք հասկանաք, թե ինչու եմ ես անում այն, ինչ անում եմ: Եկեք պարզապես ենթադրենք, որ հերետիկոսական վարդապետությունը լիովին արմատավորվել է ոչ ավելի, քան 5, 10, լավագույն դեպքում միգուցե 20 տարվա ընթացքում, բայց դրանից ոչ ավելի: Մարդիկ ասում էին. «Դուք պետք է անեք սա կամ դուք պետք է նա անեք»: Դրանցից մի քանիսի հետ մենք դեռ կընդհարվենք: Հիմա նայենք պատմությանը: Դա տեղի է ունեցել շատ կարճ ժամանակում՝ Աստվածաշունչը գրի առնելուց հետո լավագույն դեպքում 30 կամ 40 տարվա ընթացքում, ոչ ավելի: Նախկինում էլ էր այդպես, 2000 տարի առաջ էլ հարցերը լուծում էին ստանում նույն փոխակերպումներով՝ կոնտեքստից դուրս հանված ինչ-որ բան վերածելով առանձին ուսմունքի և վաճառելով դա մարդկային բազմություններին այնպես, որ նրանք հավատան և վստահեն դրան և աղոթելով մահացած մարդկանց՝ մտածեն, որ իրենց հոգիները պաշտպանված են:

Դա ես եմ ասում ձեզ, ոչ թե հովիվ Աքթթը: Ես Մելիսա Աքթթն եմ՝ քրիստոնյա մի կին և, որ ավելի կարևոր է, մարդ, ով սիրում է Աստծո խոսքը: Երբեմն որոշ մարդիկ ինձ շատ տհաճ են թվում, բայց ես, միևնույն է, աղոթում եմ նրանց համար: Ես աղոթում եմ, որ նրանք իմանան այս գրքի լույսի մասին, գան և տեսնեն լույսը: Բայց ինչպե՞ս կարող ես ցույց տալ դա մարդկանց, որոնք համոզված են, որ իրենց ուսմունքը, որը չի բխում այս գրքից, լույսն է, որ կա, իսկ մնացած ամեն ինչը սխալ է, և մնացած բոլորը իսկական հավատացյալներ չեն: Այն, ինչ ես անում եմ, միայն ու միայն մեկ նպատակ ունի. ապացուցել, որ ցանկացած տարիքում դա կարող է պատահել քեզ հետ:

Հիշում եմ, նույնը արել եմ «Երրորդություն» բառի հետ, բայց այս անգամ ավելի լավ բառ կօգտագործեմ: Այսօր սկսել եմ ծառայությունս՝ խոսելով քրիստոնյա լինելու և կոչվելու մասին: Պատկերացնո՞ւմ եք, Նոր կտակարանում «քրիստոնյա» բառը հանդիպում է ընդամենը 2 անգամ: Եթե հաշվի առնենք, որ խոսքը մեր հավատի մասին է, դա այնքան էլ շատ չէ: Առաջինը՝ երբ Պողոսի խոսքը լսելուց հետո Ագրիպպասն ասում է նրան. «Քիչ է մնում՝ ինձ էլ համոզես, որ քրիստոնյա դառնամ»: Եվ երկրորդը՝ երբ հավատի համար հալածանքների մասին խոսելիս Պետրոսն ասում է. «Իսկ եթե տանջվում է որպես քրիստոնյա..»: Այո, այդ բառն ամեն տողում հիշատակված չէ, բայց դրանով քրիստոնեական ուսմունքը կամ նրա ընկալումը չի չեղարկվում:

Հիմա եկեք հակառակվենք այդ մտքին և համոզվենք, որ ուսմունք համարվող ցանկացած բան պետք է այս գրքից բխի: Եվ այստեղ ոչ մի բայց չի կարող լինել: Իսկ մարդիկ շարունակում են անել նույն բանը. Ես բազմիցս խոսել եմ դրա մասին: Խոսքս նվիրաբերությունների մասին է: Հասկանո՞ւմ եք՝ Աստված ասել է, որ տասանորդ տալը սրբություն է, որ Տիրոջ համար դա սրբազան ընծա է: Նշանակում է, որ այն իրեն է պատկանում: Բայց մինչ օրս էլ կան մարդիկ, որոնք ասում են. «Ոչ մի տասանորդ, դա իմ փողն է»: Նրանք ընդհանրապես տեղյակ չեն, թե երբ է դա տեղի ունեցել և ինչ է նշանակում՝ ըստ այս գրքի: Ես ուզում եմ, որ մենք իսկապես գիտակցենք դա:

Ես նույնիսկ վերնագիր էի մտածել այդ թեմայի համար: Ես պատրաստվում էի խոսել ձեզ հետ այն մասին, որ այս գրքում կան որոշ բաներ, որոնց հիման վրա մենք կարող ենք հասկանալ Քրիստոսի, նրա գերակայության և ամենուր նրա ներկայության մասին Պողոսի գրածը: Այն ամբողջությամբ դրա մասին է: Ես նույնիսկ կասեի, որ այդ գրության երկրորդ մասը քրիստոնյա լինելու մասին աշխատություն է: Ջին Աքթթը ճիշտ էր ասում. եթե ուզում ես լինել քրիստոնյա, եղի՛ր: Այլ ձևակերպումներ պետք չեն: Կամ քրիստոնյա ես, կամ ոչ: Կամ դու փորձում ես հետևել այս գրքին, փորձում ես հասկանալ, թե ինչ հայտնություն կա նրանում, կամ ոչ: Ոչ մի միջանկյալ բան: Մի ասեք ինձ, որ գնում եք եկեղեցի և 20 րոպես սոցիալական արդարության մասին քարոզ եք լսում: Հոգևոր հովիվները, սպասավորները և քահանաները պետք է Աստծո խոսքը քարոզեն, Հիսուս Քրիստոսին Տեր և Փրկիչ հռչակեն: Աշխարհում շատ բաներ են կատարվում:

Նրանք էլ Աստվածաշնչի հիման վրա սովորեցնում են մարդկանց որպես քրիստոնյա պայքարել որոշ երևույթների դեմ: Բայց մենք չպետք է աշխարհին հարմարվենք: Մենք պետք է ձգտենք նման լինել Քրիստոսին: Մարդկանց պետք է ուսուցանել դա, հակառակ դեպքում նրանք չեն էլ իմանա, որ եկեղեցին գոյություն ունի հենց դրա համար: Էլ չասեմ, որ մենք մահացած մարդկանց չենք աղոթում: Այո:

Այս թեմայի շուրջ, կարծում եմ, բավականաչափ խոսել եմ արդեն՝ սրբեր և հավատացյալ եղբայրներ: Այսպիսով՝ «hagiois kai pistois adelphois en Christo»: Այսքանը բավական է: En Christo:

«Hagiois» նշանակում է սուրբ կամ սրբեր, մենք գործածում ենք սրբեր բառը, «kai»՝ նշանակում է և, «pistois»՝ հավատացյալներ, «adelphois»՝ եղբայրներ և «en Christo»՝ Քրիստոսի: Բավականին հետաքրքիր է: Դուք միգուցե դա չեք նկատել, բայց Պողոսն ինքն իրեն անվանել է Աստծո կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալ. «Կողոսիայում Քրիստոսով եղող սրբեր ու հավատացյալ եղբայրներ»: Հետաքրքիր դիտարկում է. ողջույնի խոսքերում երեք բառ է գործածվել՝ «սրբեր», «հավատացյալներ» և «եղբայրներ»: Բայց կարող էր լինել մեկը՝ «եկեղեցի», «ekklesia» կամ «ընտրյալներ», հունարեն «exelexato»՝ «ընտրված նրանցից, ովքեր ընտրված չեն եղել»: Մեկ բառի փոխարեն երեքը՝ Աստծո ընտրյալներին դիմելու համար: Բոլորի միջից Աստված հենց նրանց է կանչել, ովքեր ոչ թե պարզապես հավատացյալներ են, այլ Քրիստոսով եղբայրներ: Եթե ունենք երեք ձևակերպում, ապա այսպիսի մի հարց է առաջանում:

Եթե սրբությունը և սրբերը ոչ մի կապ չունեն աստվածահաճո արարքների կամ առհասարակ մարդ արարածի Եուբայան ու վարքագծի հետ, բայց միևնույն ժամանակ անմիջական կապ ունեն այն ամենի հետ, ինչի հիման վրա Աստված կանչել է իր ընտրյալներին, ուրեմն բոլոր այդ մարդիկ սուրբ են, այնպես չէ՞: Ուրեմն այն մարդը, ով հենց հիմա՝ կիրակի առավոտյան ժամը 12:15-ին, դուրս է գալիս թմրադեղերի ազդեցությունից, սուրբ է: Նա, ով 60 տարի շարունակ իր մեջ Աստծուն է կրում, և դա իր կյանքի մի մասն է, սուրբ է: Տղամարդը, ում կինն ամուսնալուծության դիմում է ներկայացրել իրեն, սուրբ է: Կինը՝ չգիտեմ, բայց դու սուրբ ես:

Խոսքն այն մասին է, թե ինչքան է աղավաղվել այդ բառի գործածությունն այսօր և հեռացել իր բուն իմաստից: Անկախ նրանից լավն եք դուք, թե վատը, ծեր եք, թե երիտասարդ, դուք բոլորդ սուրբ եք: Իրականում ողջույնի խոսքից մեջբերված այդ երեք բառերը՝ սրբեր ու հավատացյալ եղբայրներ, շատ ճիշտ են բնութագրում այն մարդկանց, ում դրանք ուղղված են: Նաև շատ ճիշտ նկարագրում են այն ժամանակների եկեղեցի այցելողներին, որում ապրել է Պողոսը: Բայց այդ բառերը պետք է ներդաշնակ լինեն նաև այսօրվա հավատացյալների հետ: Մտածեք այդ մասին: Ողջույնի այդ խոսքը, որն ուղղված է կողոսացիներին, ուղղված է նաև ձեզ՝ սրբերիդ, հավատացյալներիդ, որոնք ապավինում են Քրիստոսին, և Քրիստոսով եղբայրներիդ: Իսկ ի՞նչ եք կարծում,

այսօրվա եկեղեցին այդպիսի՞ն է: Ոչ, իհարկե: Իսկ ինչո՞ւ: Մի պատասխանեք, երկար կլինի: Բոլորս կասենք՝ բլա, բլա, բլա, կամ ավելի ճիշտ քնից նոր արթնացած փնթփնթան մարդու ձայնով՝ բլա, բլա, բլա: Բայց այսօրվա եկեղեցին այդպիսին չէ. միայն տեսեք, թե ինչպես ենք մենք աղավաղել «սուրբ» բառի իմաստը: Կամ վերցնենք «հավատացյալ» բառը: Ոմանք կարծում են, որ այս համատեքստում այն կապված չէ Քրիստոսին հավատարիմ լինելու հետ, նրա իմաստը կատարյալ լինելը չէ: «Չավատացյալ» նշանակում է հույսով լցված, այսինքն՝ ես վստահում եմ Քրիստոսին իմ կյանքի ցանկացած իրավիճակում, երբ ամեն բան լավ է, և երբ ամեն ինչ այդքան էլ լավ չէ:

Քրիստոսով հավատացյալ եղբայրներ. այսինքն՝ հավատարմաբար ներկայացող, հավատարմաբար սովորող, հավատարմաբար աղոթող սեփական խաղաղության և թշնամիներիդ համար, հավատարմաբար հիշող, որ Աստված է ընտրել քեզ: Այո, նա ընտրել է քեզ այն մարդկանցից, ում չէր ընտրել: Յենց դա է Աստվածաշնչի հիմնական դրույթը: Եվ վերջին բառը, որն առանձնացրել եմ՝ «adelphois», «եղբայրներ»: Դա վերջին բանն է, ինչի մասին կխոսեմ այսօր, և դրանով ուղերձս կեզրափակեմ:

Այստեղ խոսքն արյունակցական կապի մասին չէ, բացառությամբ Քրիստոսի արյան: Եղբայրությունն չի նշանակում մեզք մեզքի տված: Ես կարող եմ քո մեջքին կանգնած լինել, բայց քո թիկունքը չպահել: Եղբայրության իմաստն այն է, որ կարողանաս եղբայր կամ քույր լինել Աստծով: Մեր օրերում թերևս շատ քչերն են դա հասկանում: Մարդկանց մեծ մասը, որոնց հետ ես շփվել եմ այս եկեղեցուց դուրս, Քրիստոսով եղբայրներ կամ Աստծով ընտանիք ասելով հասկանում է միայն այն, ինչը քարոզում են փոփոխված և աղավաղված ուսմունքները, ուրիշ ոչինչ: Ես ձեզ հետևյալը կասեմ: Եթե եկեղեցին այդ երեք բառերը՝ «սրբեր», «հավատացյալներ» և «եղբայրներ», եկեք ասենք «Քրիստոսով եղբայրներ», գործածել իրենց բուն իմաստներով, մենք կունենայինք այն նույն եկեղեցին, որն ի սկզբանե հիմնել էր Յիսուս Քրիստոսը:

Չասկանո՞ւմ եք, եթե մենք ինքներս մեզ սկսենք համարել ընտրյալներ նրանց միջից, որոնք ընտրված չէին, դրան պետք է հավատալ ամբողջ սրտով, դա չպետք է լինի միայն խոսքով: Եվ դա չի նշանակում, որ դուք ինչ-որ Էլիտար խումբ եք. «Դե ես ընտրյալ եմ, իսկ դու՞ ոչ»: Չակառակը: Դիմացինին վերևից նայելու փոխարեն նայեք ուղիղ նրա աչքերի մեջ, և կտեսնեք ձեր եղբորը կամ քրոջը, ով գուցե և դեռ չի դարձել Քրիստոսով ձեր եղբայրը կամ քույրը: Իսկ երբ փնտրում եք այլ բան, դուք հեռանում եք Տիրոջից:

Մեզանից յուրաքանչյուրը հավատքի քայլող պատվիրակ է, որովհետև ամեն օր մենք կարող ենք հանդիպել մարդկանց, որոնք միգուցե ոչ այնքան լավ պատկերացում ունեն սուրբ լինելու մասին կամ միգուցե դեռ չեն գիտակցում, թե ինչ է նշանակում Քրիստոսով եղբայր լինել: Իսկ Քրիստոսով եղբայր լինելը հենց այն է, ինչի մասին խոսում էին կողոսացիները. ամեն ինչում պետք է լինի Քրիստոսի գերակայությունը, մեզ համար նա պիտի լինի ամենակարևորն ու



առանցքայինը: Հավատացյալն իր ամբողջ եռությամբ պետք է կենտրոնացած լինի Քրիստոսի վրա, և վե՛րջ: Ոչ թե կատարելության, որովհետև ոչ ոք կատարյալ չէ, ոչ թե գերազանցության, որովհետև ոչ ոք չունի այն, և ոչ էլ բարի գործերի, որովհետև մեծ հաշվով դրանք ոչ ոքի չեն հետաքրքրում: Ես չեմ ասում՝ բարություն մի արեք: Ես ասում եմ՝ բարություն մի արեք միայն նրա համար, որ փրկվեք: Նույնիսկ անհավատ մարդիկ են բարի գործեր անում: Ուստի այն, ինչ այսօր ասում եմ ձեզ, ուղղված է սրբերին, հավատացյալներին և Քրիստոսով եղբայրներին ու քույրերին: Երբեմն լավ կլինի մի պահ պարզապես կանգ առնել և հասկանալ, թե ինչ ունես, ինչ ես սովորել և ընդունել, և ինչը միգուցե դեռ չես վերապրել դրանով լցվելու համար: Ուզում եմ մի բան ասել: Ձեզանից առնվազն մեկի հետ դա տեղի կունենա: Եվ սրանք ինչ-որ մարգարեական խոսքեր չեն, սա իրականություն է: Ձեզանից գոնե մեկը մոտ ապագայում առիթ կունենա քննարկել իր ընկերների հետ «սուրբ» բառի նշանակությունը, եթե իհարկե դա արդեն չի եղել: Եվ ամենահրաշալիս այն կլինի, որ դուք ստիպված չեք լինի ձեր ճիշտը համոզել նրանց: Բավական կլինի միայն հղում անել պատմությանը, ցույց տալ նրանց պատմական գրքերը և տարեգրությունները, որտեղ ամեն ինչ մանրամասն նկարագրվում և բացատրվում է, և այդ ամենը համեմատել Աստվածաշնչում գրվածի հետ: Ահա մի մեջբերում Հին Կտակարանից. «Նրանք եկան Ռախաբ անունով մի պռնիկ կնոջ տուն և այնտեղ պառկեցին»: Ռախաբ: Եվ դա կատակ չէ: Մեր օրերում մարդիկ կասեին, որ նման կինը երբեք չի կարող համարվել սուրբ: Բայց նա, ինչպես և այս գրքի շատ ուրիշ տղամարդիկ և կանայք, որոնք հնարավոր վտանգի դեպքում քաջություն են դրսևորել, ինձ համար առաջին տեղում են: Ես հասկանում եմ նահատակին մեծարելու գաղափարը, բայց ավելի կարևոր է նրա հավատը, ոչ թե արարքները: Եվ դա արտահայտվել է հետևյալում. որքան էլ որ դաժան թվա, բայց եթե դա է Աստծո պատվիրանը, ես կանեմ դա և որպես նշան պարան կկախեմ իմ պատուհանից և կհավատամ, որ Աստծո խոսքը ճշմարիտ կլինի, և որ ես և իմ ընտանիքը կփրկվենք: Եվ հենց այդպես էլ եղավ: Ու եթե ինձ պետք լիներ մեկ բառով նկարագրել այդ կնոջը, ես կընտրեի «սուրբ» բառը: Բայց գիտե՞ք ինչ: Կա մի ընտրություն, որը մենք անում ենք ամեն օր: Այն գուցե այդքան էլ դրամատիկ չէ, որքան Ռախաբի ընտրությունը, բայց խոսքը նույն բանի մասին է. հավատալ Քրիստոսին, թե սեփական բազկի ուժին: Դուք չպետք է ակնկալեք հատուկ մեղալներ կամ պատվոգրեր այն բանի համար, որ այսօր վստահում եք Քրիստոսին, որ այսօր ունեք Աստծո կարիքը: Դա պետք է ձեր սրտից բխի: Ձեր սիրտը պետք է ասի՝ փառք քեզ, Տեր, որ առաջնորդել ես ինձ և բացել ես իմ աչքերը հասկանալու համար, որ ես կանչվել և ընտրվել եմ քո կողմից: Հետևաբար ես սուրբ եմ, լավն եմ, թե՛ վատը, սուրբ եմ: Փառք Աստծուն, ես սուրբ եմ:

Հուսամ՝ կլինեն մարդիկ, որ այս ամենին ի պատասխան կասեն «Ամեն»:  
Ոմանք էլ կասեն՝ հմմ: Բայց ինչպես արդեն ասել եմ, դուք ինքներդ կարող եք ստուգել այս տեղեկությունները և այն, ինչ կգտնեք, ձեզ շատ կգարմացնի: Հուսով

Saints, Faithful and Brethren in Christ, Colossians Series Chapter 1 #2

Եմ, որ հաջորդ շաբաթ կրկին այստեղ կլինեք, և միասին կշարունակենք դեպի կողոսացիներ մեր ճամփորդությունը: Հուսով եմ՝ հաջորդ շաբաթ կրկին տեսնել ձեզ: Այսբանը:

**ՓԱԿՈՒՄ**

Ես հովիվ Մելիսա Սքոթն եմ: Դուք դիտում էիք իմ ուղիղ եթերը Կալիֆոռնիայի Գլենդել քաղաքի Հավատքի կենտրոնից:

Եթե դուք էլ եք ցանկանում միանալ մեզ ամեն կիրակի առավոտյան ժամը 11-ին, զանգահարեք 1-800-338-3030:

Եթե ցանկանում եք ստանալ ավելի շատ գիտելիքներ, այցելեք մեր կայք՝ [www.pastormelissascott.com](http://www.pastormelissascott.com):